«ԵՐԵՎԱՆԻ ՆԵՐՍԵՍ ՄԵԾԻ ԱՆՎԱՆ

Հ.124 ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԴԱՍՂԵԿԻ ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՏԱՐԵԿԱՆ ՊԼԱՆ

2022 – 2023 ուստարի

ԴԱՍԱՐԱՆ՝ Ի՝

ՈՒՍՈՒՑԻՉ՝ Ս.Ա.Մուրադյան

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ՈՒՍՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ

ՈՒսումնադաստիարակչական աշխատանքները պետք է բխեն երեխաների տարիքային առանձնահատկություններից: Այս աշխատանքները պետք է բարձրացնեն ուսման որակը և նպաստեն ճիշտ և պիտանի քաղաքացիներ դաստիարակելուն: Այս աշխատանքները նպատակային և արդյունավետ կլինեն մշտապես պահպանելով դպրոց-ծնող-ուսուցիչ համագործակցությունը:

2.ՀՈԳԵՎՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Հոգևոր դաստիարակությունը նպաստում է աշակերտների մեջ ձևավորել ազգային արժանապատվության զգացումը:Դասղեկի ժամերին պետք է խոսել հոգևոր արժեքների ձևավորման մասին:Հոգևոր դաստիարակությունը դաստիարակության համակարգի կարևոր բաղադրամասերից է: Նպաստում է աշակերտների մեջ ձևավորել ազգային արժեքներ:

3.ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ ձևավորել և զարգացնել գեղագիտական ճաշակ:Այդ նպատակով զրույցի միջոցով նրանց հաղորդել տեղեկատվություն մարդկանց կյանքում գեղեցիկի դերի մասին,ինչպես նաև ընձեռել հնարավորություն ինքնարտահայտվելու:

4.ՌԱԶՄԱՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք հայրենիքի,ակնածանք հայ ազատամարտիկների և ֆիդայիների նկատմամբ:Ծանոթացնել հայ ազատամարտիկների կյանքի պատմությանը,քննարկել երեխաների ուշադրությունը կենտրոնացնելով բնավորության այնպիսի գծերի վրա,որտեղ ակներև է հայրենասիրությունը:Սովորեցնել ռազմահայրենասիրական երգեր:

5.ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Նպաստել երեխաների ֆիզիկական պատրաստվածության զարգացմանը,բացատրել մարմինը ֆիզվարժությունների և հնարների միջոցով կոփելու կարևորությունը,ինչպես նաև նպաստել վնասակար սովորություններից զերծ մնալու կարողությունների ձևավորմանն ու զարգացմանը:

6.ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Աշակերտների մոտ սերմանել սեր աշխատանքի և աշխատավոր մարդու նկատմամաբ,ձևավորել և զարգացնել աշխատանքային հմտությունները և կառուցողական մոտեցում:Աշխատանքը աշակերտի կողմից պետք է դիտարկվի որպես կյանքի և գոյատևման աղբյուր:

7.ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

Զրույցի միջոցով երեխաների մոտ ձևավորել հոգատար վերաբերմունք բնության նկատմամաբ:Ներկայացնել բնապահպանական խնդիրներ,նշել դրանց վտանգավորության և բնության պահպանման կարևորության մասին:

8.ԴՊՐՈՑ-ԸՆՏԱՆԻՔ ԿԱՊԸ

ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՇԱԲԱԹՆԵՐ	ՈՒՍՈՒՄՆԱԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ	ԿԱՏԱՐՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ	ԿԱՏԱՐՈՂՆԵՐ
ՍԵՊՏԵՄԲԵՐ	Ծանոթություն միմյանց հետ	1.09 – 9.09	
	Ծանոթություն դպրոցական կարգ ու կանոնին	12.09 – 20.09	
	Զրույց հիգիենայի կանոնների պահպանման մասին	22.09-30.09	
ՀՈԿՏԵՄԲԵՐ	Մշակել դասարանական վարքի կանոններ	3.10-7.10	
	Ի՞նչ է ընկերությունը:Լինենք ընկերասեր	10.10 – 15.10	
ՆՈՅԵՄԲԵՐ	Անձնական հիգիենայի պահպանում	10.11	
	Ճանապարհատրանսպորտային երթևեկության անվտանգության կանոններ	14.11-18.11	
	Ոսկեծամիկ աշուն	21.11-25.11	
ԴԵԿՏԵՄԲԵՐ	Փողոցներում և ճանապարհներին հետիոտների վարքի հիմնական կանոնները	28.11-2.12	
	Իմ ընտանիքը (զրույց,նկարել)	5.12-9.12	
	Կարգապահության կարևորությունը	12.12-16.12	
	Նամակ Ձմեռ պապիկին (նկարել)	19.12-23.12	
ՀՈՒՆՎԱՐ	Ճանաչենք մեր հայրենիքը	23.01-27.01	
ՓԵՏՐՎԱՐ	Մեր փոքրիկ բարեկամները	30.01-3.02	
	Ես սիրում եմ իմ քաղաքը	6.02-10.02	
	Հեքիաթների աշխարհում	13.02-17.02	
	Քաղաքավարությունը՝ մարդու կարևոր բնութագիր:	20.02-24.02	

	Ինչ է ազնվությունը	13.03-17.03	
Ա Պ Ր Ի Լ	Բնության պահպանության կարևորությունը	10.04-15.04	
	Ճիշտ սնվելու փոքրիկ գաղտնիքները	17.04-21.04	
	Ես քո զավակն եմ,Հայաստա՛ն	25.04-28.04	
Մ Ա Յ Ի Ս	Մայիսյան եռատոն	1.05-10.05	
	Գիտելիքը ուժ է	15.05-19.05	
	Ինչպես պետք է մեզ պահենք հասրակական վայրերում	22.05-25.05	
Հ Ո Ւ Ն Ի Ս	Ամառային զբոսանք	1.06-4.06	